Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի Վճարային հաշվեկշռի դրույթների մասին փոխհամաձայնություն

Անդամները,

ընդունելով ՄԱԳՀ-1994-ի XII և XVIII.Բ Հոդվածների դրույթները և 1979թ. նոյեմբերի 28-ին ընդունված Վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկվող առևտրային միջոցների մասին հայտարարագրի (BISD 26S/205-209 (որը սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «1979թ. Հայտարարագիր») դրույթները, և այդ դրույթները հստակեցնելու նպատակով[1],

սույնով համաձայնում են հետևյալի մասին.

Միջոցների կիրառում

1. Անդամները հաստատում են իրենց պարտավորվածությունը՝ հնարավորին չափ շուտ հրապարակորեն հայտարարել վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված՝ ներմուծումը սահմանափակող միջոցների վերացման ժամկետացանկերի մասին: Հասկացվում է, որ այդ ժամկետացանկերն անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխվել՝ հաշվի առնելու վճարային հաշվեկշռի իրավիճակի փոփոխությունները: Եթե Անդամը հրապարակորեն չի հայտարարել ժամկետացանկի մասին, ապա այդ Անդամը հիմնավորում է տալիս դրա պատճառների մասին:

2. Անդամները հաստատում են իրենց պարտավորվածությունը՝ նախապատվություն տալու այն միջոցներին, որոնք առևտրի վրա նվազագույնս խաթարող ազդեցություն ունեն: Հասկացվում է, որ այդ միջոցները (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում են որպես «գնի վրա հիմնված միջոցներ») ընդգրկում են ներմուծման լրացուցիչ վճարները, ներմուծման կանխավճարի պահանջները կամ ներմուծված ապրանքների գնի վրա ազդեցություն ունեցող այլ համարժեք առևտրային միջոցներ: Հասկացվում է, որ անկախ II Հոդվածի դրույթներից, վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված՝ գնի վրա հիմնված միջոցներն Անդամի կողմից կարող են կիրառվել՝ ի լրումն այդ Անդամի ժամանակացանկում նշված տուրքերի: Ի լրումն դրա՝ այդ Անդամը, սույն Փոխհամաձայնության ծանուցման ընթացակարգերի համաձայն, հստակորեն և առանձին մատնանշում է այն չափը, որով գնի վրա հիմնված միջոցը գերազանցում է ամրագրված տուրքը:

3. Անդամները ձգտում են խուսափել վճարային հաշվեկշռի նպատակներով նոր քանակական սահմանափակումներ կիրառելուց, քանի դեռ գնի վրա հիմնված միջոցները վճարային հաշվեկշռի ծայրահեղ իրավիճակի պատճառով չեն կարող կանգնեցնել արտաքին վճարային դիրքի կտրուկ վատթարացումը: Այն դեպքերում, երբ Անդամը կիրառում է քանակական սահմանափակումներ, նա պատճառաբանում է, թե ինչու գնի վրա հիմնված միջոցները համարժեք գործիք չեն վճարային հաշվեկշռի վիճակը կարգավորելու համար: Հետագա խորհրդակցությունների ընթացքում Անդամը, որը քանակական սահմանափակումներ է պահպանում, ցույց է տալիս այդ միջոցների ընդգրկման շրջանակների ու սահմանափակող ազդեցության էական նվազեցման ուղղությամբ կատարված առաջընթացը: Հասկացվում է, որ միևնույն արտադրանքի նկատմամբ կարող է կիրառվել վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված, ներմուծումը սահմանափակող մեկից ոչ ավելի տեսակի միջոց:

[1] Սույն Փոխհամաձայնությունը ոչնչով չի նախատեսում փոփոխել Անդամների՝ ՄԱԳՀ-1994-ի XII և XVIII.Բ Հոդվածներով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները: ՄԱԳՀ-1994-ի XII և XIII Հոդվածների դրույթները, ինչպես մշակվել ու կիրառվում են Վեճերի կարգավորման փոխհամաձայնությամբ, կարող են կիրարկվել վճարային հաշվեկշռի նպատակներով ներմուծումը սահմանափակող միջոցների կիրառումից ծագող ցանկացած հարցի առնչությամբ:

4. Անդամները հաստատում են, որ վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված ներմուծումը սահմանափակող միջոցները կարող են կիրառվել միայն ներմուծման ընդհանուր մակարդակը վերահսկելու համար և չեն կարող ավելին լինել, քան այն, որ անհրաժեշտ է վճարային հաշվեկշռի վիճակը կարգավորելու համար: Կողմնակի հովանավորչական ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար Անդամը սահմանափակումներն իրականացնում է թափանցիկ կերպով: Ներմուծող Անդամի իրավասու մարմինները համապատասխան հիմնավորում են տալիս այն չափանիշների վերաբերյալ, որոնց գործածմամբ որոշվում են սահմանափակման ենթակա արտադրանքները: Համաձայն XII Հոդվածի 3-րդ կետի և XVIII Հոդվածի 10-րդ կետի՝ Անդամը կարող է առանձին կարևոր արտադրանքների մասով բացառել կամ սահմանափակել սահմանի վրա կիրառվող լրացուցիչ վճարների կամ վճարային հաշվեկշռի նպատակներով կիրառվող այլ միջոցների կիրառումը: Հասկացվում է, որ «կարևոր արտադրանքներ» հասկացությունը նշանակում է արտադրանքներ, որոնցով բավարարվում են սպառողական հիմնական կարիքները, կամ որոնք նպաստում են վճարային հաշվեկշռի վիճակի

բարելավման ուղղությամբ Անդամի ջանքերին, ինչպիսիք են արտադրության համար անհրաժեշտ հիմնական միջոցներն ու ներդրանքը: Քանակական սահմանափակումներ իրականացնելիս Անդամը հայեցողական լիցենզավորում է կիրառում միայն, երբ դա անխուսափելի է, և աստիճանաբար վերացնում է այն: Համապատասխան հիմնավորում է տրվում այն չափանիշների վերաբերյալ, որոնց գործածմամբ որոշվում են ներմուծման թույլատրելի քանակներն ու արժեքները:

Վճարային հաշվեկշռի շուրջ խորհրդակցությունների ընթացակարգեր

5. Վճարային հաշվեկշռի սահմանափակումների հարցերով հանձնախումբը (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «Հանձնախումբ») խորհրդակցություններ է անցկացնում՝ վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված ներմուծումը սահմանափակող բոլոր միջոցների վերաքննության համար: Հանձնախմբին անդամությունը բաց է բոլոր Անդամների համար, որոնք հայտնում են դրանում ծառայելու իրենց ցանկության մասին: Հանձնախումբը հետևում է 1970թ. ապրիլի 28-ին հաստատված՝ վճարային հաշվեկշռի սահմանափակումների շուրջ խորհրդակցությունների անցկացման ընթացակարգերին (BISD 18S/48-53, սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «խորհրդակցությունների լրիվ ընթացակարգեր»)՝ հաշվի առնելով ներքոշարադրյալ դրույթները:

6. Անդամը, որը նոր սահմանափակումներ է կիրառում կամ միջոցների էական սաստկացմամբ բարձրացնում է իր գոյություն ունեցող սահմանափակումների ընդհանուր մակարդակը, խորհրդակցությունների մեջ է մտնում Հանձնախմբի հետ՝ այդ միջոցների ընդունումից հետո՝ չորս ամսվա ընթացքում: Այդպիսի միջոցներ ընդունող Անդամը կարող է պահանջել, որ խորհրդակցություն անցկացվի համաձայն XII Հոդվածի 4«ա» կետի կամ XVIII Հոդվածի 12«ա» կետի՝ ըստ անհրաժեշտության: Եթե այդպիսի պահանջ չի ներկայացվում, ապա Հանձնախմբի Նախագահն է Անդամին հրավիրում այդպիսի խորհրդկցության: Այն գործոնները, որոնք կարող են քննության առնվել խորհրդակցության ընթացքում, այլոց թվում ընդգրկում են վճարային հաշվեկշռի նպատակներով նոր տեսակի սահմանափակող միջոցներ մտցնելը կամ սահմանափակումների մակարդակի բարձրացումը կամ ապրանքային ընդգրկման ընդլայնումը:

7. Վճարային հաշվեկշռի նպատակներով կիրառվող բոլոր միջոցները ենթակա են Հանձնախմբում պարբերական վերաքննության՝ համաձայն XII Հոդվածի 4«բ» կետի կամ XVIII Հոդվածի 12«բ» կետի, ընդ որում՝ խորհրդակցությունների պարբերականությունը ենթակա է հնարավոր փոփոխման՝ խորհրդակցող Անդամի համաձայնությամբ կամ համաձայն վերաքննության որևէ առանձին ընթացակարգի, որ կարող է առաջարկել Գլխավոր խորհուրդը:

8. Առավել թույլ զարգացած Անդամ-երկրների դեպքում կամ այն զարգացող Անդամ-երկրների դեպքում, որոնք ազատականացման ուղղությամբ աշխատանքներ են տանում նախորդ խորհրդակցություններում Հանձնախմբին ներկայացված ժամանակացանկին համապատասխան, խորհրդակցությունները կարող են անցկացվել համաձայն 1972թ. դեկտեմբերի 19-ին հաստատված պարզեցված ընթացակարգերի (BISD 20S/47-49, սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում են որպես «խորհրդակցությունների պարզեցված ընթացակարգեր»): Խորհրդակցությունների պարզեցված ընթացակարգերը կարող են նաև գործածվել, երբ զարգացող Անդամ-երկրի Առևտրի քաղաքականության վերաքննությունը նախատեսված է նույն օրացույցային տարում, որի ընթացքում նշանակված են խորհրդակցությունները: Այդ դեպքերում որոշումը՝ պետք է արդյոք գործածվեն խորհրդակցությունների լրիվ ընթացակարգերը, կկայացվի 1979թ. Հայտարարագրի 8-րդ կետում թվարկված գործոնների հիման վրա: Բացառությամբ առավել թույլ զարգացած Անդամ-երկրների՝ խորհրդակցությունների պարզեցված ընթացակարգերով կարող են անցկացվել ոչ ավելի, քան երկու հաջորդական խորհրդակցություններ:

Ծանուցումներ և փաստաթղթեր

9. Անդամը Գլխավոր խորհրդին ծանուցում է վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված ներմուծումը սահմանափակող միջոցը մտցնելու կամ դրա կիրառման ցանկացած փոփոխության մասին, ինչպես նաև այդպիսի միջոցների վերացման՝ 1-ին կետի համաձայն հայտարարված ժամկետացանկում ցանկացած փոփոխության մասին: Գլխավոր խորհրդին զգալի փոփոխությունների մասին ծանուցումը կատարվում է դրանց մասին հայտարարությունից առաջ կամ ոչ ուշ, քան հայտարարությունից 30 օր հետո: Յուրաքանչյուր Անդամ տարեկան հիմունքով Քարտուղարությանը Անդամների կողմից քննման համար մատչելի է դարձնում համապարփակ ծանուցում, ներառյալ՝ օրենքներում, կանոնակարգերում, քաղաքականության հարցերով հայտարարություններում կամ հրապարակային ծանուցումներում կատարված փոփոխությունները: Ծանուցումները մաքսային հոդվածի մակարդակով պարունակում են հնարավորին չափ ամբողջական տեղեկություններ կիրառվող միջոցների տեսակների, դրանց իրականացման նպատակով գործածվող չափանիշների, ապրանքային ընդգրկման և ազդեցություն կրող առևտրի հոսքերի վերաբերյալ:

10. Ցանկացած Անդամի պահանջով Հանձնախումբը կարող է վերաքննել ծանուցումները: Այդ վերաքննությունները սահմանափակվում են ծանուցմամբ բարձրացված առանձին հարցերի պարզաբանմամբ կամ այն բանի քննությամբ, թե արդյոք պահանջվում է խորհրդակցություն անցկացնել համաձայն XII Հոդվածի 4«ա» կետի կամ XVIII Հոդվածի 12«ա» կետի: Անդամները, որոնք հիմքեր ունեն համարելու, որ մեկ այլ Անդամի կիրառած ներմուծումը սահմանափակող միջոցը ձեռնարկվել է վճարային հաշվեկշռի նպատակներով, կարող են հարցը ներկայացնել Հանձնախմբի ուշադրությանը: Հանձնախմբի նախագահը պահանջում է տեղեկություններ միջոցի վերաբերյալ և դրանք մատչելի է դարձնում բոլոր Անդամների համար: Առանց վնասելու Հանձնախմբի որևէ անդամի՝ խորհրդակցությունների ընթացքում համապատասխան պարզաբանումներ ձեռք բերելու իրավունքը, խորհրդակցող Անդամի կողմից հաշվի առնելու համար կարող են հարցեր տրամադրվել նախօրոք:

11. Խորհրդակցող Անդամը խորհրդակցությունների համար պատրաստում է Հիմնական փաստաթուղթ, որը, ի լրումն այլ տեղեկությունների, որոնք համարվում են գործի հետ առնչություն ունեցող, պետք է պարունակի. ա) վճարային հաշվեկշռի վիճակի ընդհանուր նկարագիրն ու հեռանկարները, ներառյալ՝ վճարային հաշվեկշռի վիճակի հետ առնչվող ներքին և արտաքին գործոններն ու ներքին քաղաքականության միջոցները, որոնք ձեռնարկվել են հիմնավոր ու տևական հավասարակշռության վերականգնման համար, բ) վճարային հաշվեկշռի նպատակներով կիրառվող սահմանափակումների ամբողջական նկարագրությունը, դրանց իրավական հիմքերը և այն քայլերը, որոնք ձեռնարկվել են կողմնակի հովանավորչական ազդեցությունների նվազեցման համար, գ) ներմուծման սահմանափակումների ազատականացման նպատակով վերջին խորհրդակցությունից հետո ձեռնարկված միջոցները՝ ելնելով Հանձնախմբի եզրակացություններից, դ) մնացյալ սահմանափակումների վերացման և աստիճանական մեղմացման ծրագիրը: Գործի հետ առնչություն ունենալու դեպքում հղումներ կարող են արվել ԱՀԿ ներկայացված ծանուցումներում կամ զեկուցագրերում եղած տեղեկություններին: Խորհրդակցությունների պարզեցված ընթացակարգերի ժամանակ խորհրդակցող Անդամը ներկայացնում է գրավոր հաշվետվություն, որը էական տեղեկություններ է պարունակում Հիմնական փաստաթղթում ընդգրկված տարրերի վերաբերյալ:

12. Քարտուղարությունը նպատակ ունենալով դյուրինացնել Հանձնախմբում խորհրդակցությունների անցկացումը, պատրաստում է խորհրդակցությունների ծրագրի տարբեր բնագավառներին վերաբերող՝ փաստերի վրա հիմնված հիմնային փաստաթուղթ: Զարգացող Անդամ-երկրների դեպքում Քարտուղարության փաստաթուղթը պարունակում է գործի էական նախադրյալները և ու վերլուծական համապատասխան նյութեր՝ խորհրդակցող Անդամի վճարային հաշվեկշռի վիճակի և հեռանկարների վրա արտաքին առևտրային միջավայրի ունեցած ազդեցության ոլորտների վերաբերյալ: Զարգացող Անդամ-երկրի պահանջով Քարտուղարության տեխնիկական աջակցության ծառայություններն աջակցում են խորհրդակցությունների համար փաստաթղթերի պատրաստմանը:

Վճարային հաշվեկշռի շուրջ խորհրդակցությունների եզրակացություններ

13. Հանձնախումբն իր խորհրդակցությունների մասին զեկուցում է Գլխավոր խորհրդին: Եթե կիրառվում են խորհրդակցությունների լրիվ ընթացակարգերը, ապա զեկուցագիրը պետք է մատնանշի Հանձնախմբի եզրակացությունները խորհրդակցությունների ծրագրի տարբեր տարրերի վերաբերյալ, ինչպես նաև այն փաստերն ու պատճառները, որոնց վրա դրանք հիմնված են: Հանձնախումբը ձգտում է իր եզրակացություններում ընդգրկել հանձնարարականների առաջարկություններ, որոնք նպատակ ունեն օժանդակելու XII Հոդվածի և XVIII.Բ Հոդվածի, 1979թ. Հայտարարագրի և սույն Փոխհամաձայնության իրականացմանը: Այն դեպքերում, երբ ներկայացվել է վճարային հաշվեկշռի նպատակներով ձեռնարկված սահմանափակող միջոցների վերացման ժամկետացանկ, Գլխավոր խորհուրդը կարող է առաջարկել, որ այդ ժամկետացանկի պահպանման դեպքում համարվի, որ Անդամը կատարում է ՄԱԳՀ-1994-ով սահմանված իր պարտավորությունները: Եթե Գլխավոր խորհուրդը հատուկ հանձնարարականներ է տալի, ապա Անդամների իրավունքներն ու պարտավորությունները գնահատվում են այդ հանձնարարականներից ելնելով: Գլխավոր խորհրդի կողմից առաջարկությունների բացակայության դեպքում Հանձնախմբի եզրակացություններում պետք է գրանցվեն Հանձնախմբում արտահայտված տարբեր տեսակետները: Եթե կիրառվում են խորհրդակցությունների պարզեցված ընթացակարգեր, ապա զեկուցագիրը պարունակում է Հանձնախմբում քննարկված հիմնական տարրերի ամփոփագիրն ու որոշումը խորհրդակցությունների լրիվ ընթացակարգի կիրառման անհրաժեշտության մասին: